

09 մարտի 2016թ.

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի գյուղատնտեսության սեկտորի ֆինանսավորում» ծրագիր (FASA¹)

ԵՐԵՎԱՆ, 9 մարտի — շուտով Հայաստանում ֆերմերային տնտեսությունների ֆինանսավորման նոր սխեմա է գործարկվելու «Հայաստանի գյուղատնտեսության սեկտորի ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում, որն իրագործում է Գերմանա-հայկական հիմնադրամը՝ գերմանական KfW զարգացման բանկի հետ համատեղ:

«Վերջին 15 տարիների ընթացքում Հայաստանի ագրովարկավորման շուկան հսկայական ճանապարհ է անցել: Եթե նախկինում հաճախորդները չգիտեին, թե որտեղից կարելի է փոխառու միջոցներ հայթայթել, ապա այժմ նրանք հնարավորություն ունեն ընտրելու իրենց համար առավել նպաստավոր վարկավորման պայմանները, և դա շատ կարևոր է», - այսօր «Մարիոթ» հյուրանոցում շնորհանդես-սեմինարի ժամանակ հայտարարեց տվյալ ծրագրի իրագործմանը տեխնիկական աջակցություն ցուցաբերող շվեյցարական «**Business and Finance Consulting**» ընկերության գլխավոր տնօրեն Միխաէլ Քորթենբուշը: Միջոցառումը կազմակերպել էր գյուղատնտեսության կարիքների համար արտադրության միջոցներ՝ ներառյալ թունաքիմիկատներ և պարարտանյութեր, իրացնող հայաստանյան «ԱրտԱգրո» ընկերությունը: Շնորհանդես-սեմինարին մասնակցություն ցուցաբերեցին նաև թունաքիմիկատների և պարարտանյութերի համաշխարհային շուկայում առաջատար դիրքեր զբաղեցնող նորվեգիական YARA International ASA և իսրայելական ADAMA Agricultural Solution:

Առաջին անգամ տեղական ֆերմերներին վարկերի հասանելիությունը կկազմակերպվի ինովացիոն՝ **արժեզրթայի ֆինանսավորման սխեմայի** միջոցով (*value chain financing*): Ի տարբերություն վարկավորման ավանդական տարբերակների, տվյալ դեպքում կիրառվում է համակարգային կամ եռակողմ մոտեցումը: Այսպիսով, բանկերը և վարկային կազմակերպությունները դառնում են ամբողջ շղթայի լիարժեք ֆինանսական գործընկեր-մասնակիցներ:

Նման տիպի պիլոտային սխեման գործարկվելու է մոտակա ժամանակ «ՖԻՆ-ՔԱ Հայաստան» ՈՒՎԿ-ի և «ԱրտԱգրո»-ի մասնակցությամբ՝ ֆերմերային տնտեսությունների համալիր սպասարկման համար: Սպասվում է, որ նման բնույթի համագործակցությունը շահավետ կլինի արժեզրթայի բոլոր մասնակիցների համար: Այսպես, ֆերմերները 75000-ից 1500000 դրամի չափով և գրոյական կամ շատ ցածր տոկոսադրույքով վարկեր կկարողանան ստանալ: Վարկի տրամադրման համար սպասարկման վճարը կկազմի 3%, վարկի ժամկետը՝ 6–12 ամիս: Ավելին, վարկավորման պայմանները չեն ենթադրում այցելություն վարկառուի բնակության վայր: Մինչև 750000 դրամ գումարի վարկերը չեն պահանջի երաշխավորագրեր:

¹ Financing the Agriculture Sector in Armenia

«ՖԻՆՔԱ Հայաստան» վարկային կազմակերպությունից բացի ծրագրի վարկավորման ավանդական սխեմայի շրջանակում ներառված են ևս երեք բանկեր և հինգ վարկային կազմակերպություններ:² Ներդրումային նպատակների համար մեկ անձի գծով վարկերի առավելագույն չափը 75 մլն. Դրամ է, և դրանք տրամադրվում են երկու և ավելի տարի ժամկետով: Շրջանառու միջոցների համալրման նպատակով վարկի գումարը չի գերազանցում 33 մլն դրամը, նվազագույն ժամկետը՝ սկսած 8 ամսից: «Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագիրը նախատեսում է մի շարք դրույթներ, որոնք շահեկանորեն տարբերակում են բանկերի սեփական միջոցների կամ այլ դոնորային ծրագրերի հաշվին ֆինանսավորման պայմաններից: Դրանց թվում են. ա) բացառապես տեղական արժույթով՝ ՀՀ դրամով, ֆինանսավորումը, բ) գյուղատնտեսություն վարելու համար հող ձեռք բերելու հնարավորություն, գ) վարկերի տևողության՝ սահմանված նվազագույն ժամկետները և պարտադիր արտոնյալ ժամանակաշրջանը:

Ինչպես նշվել է, տվյալ ծրագրի իրագործման տեխնիկական աջակցությունն է ցուցաբերում շվեյցարական «**Business and Finance Consulting**» ընկերությունը, որը արժեշղթաների ֆինանսավորման սխեմաների գծով հաջող փորձ ունի Դոկաստանում, Սերբիայում, Վրաստանում, և այլն:

«Մեր առաքելությունն է լավագույն միջազգային փորձի կիրառումը և նրա տեղայնացումը Հայաստանում՝ մեր գործընկերների՝ «Ալֆա Փլաս Քոնսալթինգ» և «ICARE Foundation» ընկերությունների հետ համատեղ», բացատրեց Միխաէլ Քորթենբուշը:

«Հայաստանի գյուղատնտեսության սեկտորի ֆինանսավորման» ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում, որը սկսել է 2015թ.-ին, Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) միջոցներից գործընկեր ֆինանսական ինստիտուտներին կտրամադրվի 15 մլն եվրո: Առաջին փուլի իրագործման՝ 2013–2015թ.թ., ընթացքում տրամադրվել է 5150 վարկ՝ 13,7 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Վարկառուներ են հանդիսանում այն ձեռնարկությունները և ձեռնարկատերերը, որոնք ներգրավված են գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, գյուղատնտեսության համար նյութերի, պարարտանյութերի և քիմիկատների արտադրության, ինչպես նաև գյուղատնտեսության հետ կապված տարբեր ծառայությունների մատուցման ոլորտներում:

«Ներկա պահին մենք մշակում ենք արժեշղթաների ֆինանսավորման լրացուցիչ սխեմաներ: Մենք տեսնում ենք, որ առարկայի հանդեպ կա մեծ հետաքրքրություն ինչպես բանկերի և ֆինանսական կազմակերպությունների, այնպես էլ գյուղարտադրանքի վերամշակողների կողմից», ընդգծեց Միխաէլ Քորթենբուշը:

² Դրանց թվում են «ԱԳԲԱ Լիզինգ», «Կամուրջ», «Քարդ Ագրոկրեդիտ», «Ֆարմ Կրեդիտ», «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ-ները, ինչպես նաև «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիքոլ Բանկ», «Հայբիզնեսբանկ», և «Ինեկոբանկ» բանկերը:

Կոնտակտային տվյալներ

«ՖԻՆՔԱ Հայաստան»-ի՝ «ԱրտԱգրո» ընկերության խանութին մոտակա մասնաճյուղ.
ք.Արտաշատ, Շահումյանի փ. 33
Հեռ.՝ 60 46-65-20
Թեժ գիծ՝ 85 75

«ԱրտԱգրո» ՍՊԸ

ք.Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ. 70ա
Հեռ.՝ 23 52-27-28, 77 43-64-54, 91 24-67-57

Միխայել Քորթենբուշ,

Ծրագրի ղեկավար

kortenbusch@bfconsulting.com

Ալեքսանդր Պողոսյան,

Ծրագրի ղեկավարի առաջին տեղակալ

alex.poghossian@alphaplusconsulting.com

Դմիտրո Բոբիրև,

Արժեքչափաների ֆինանսավորման փորձագետ

dmytro.bobyrev@bfconsulting.com